ՀՈԿՏԵՄԲԵՐԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հոկտեմբեր ամսվա անցուդարձի մասին:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԳԵՐՄԱՆԻԱ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՄՓՈՓԻՉ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Հոկտեմբերի 11-ին, Շիրակի պետական համալսարանի 3-րդ ավագ դպրոցում տեղի ունեցավ «Հայաստան-Գերմանիա» դպրոցական փոխանակման ծրագրի ամփոփիչ ներկայացումը: «Մշակույթ առանց սահմանների - Շարժունակություն առանց խոչընդոտների» փոխանակման ծրագրի շրջանակներում հայկական պատվիրակությունը սեպտեմբերի 12-ից 24-ը հյուրընկալվել էր Գերմանիայի հայտնի «Կարլ Վոն Լին» հատուկ դպրոց, որտեղ սովորում են հաշմանդամություն ունեցող շուրջ 1200 աշակերտ:

Ծրագրի ավարտից հետո, աշակերտները կիսվեցին ձեռք բերված փորձով ու տպավորություններով, պատմեցին, թե ինչ գիտելիքներ են ստացել ներառականության վերաբերյալ և ինչպես են փոխվել նրանց հայացքները հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ՝ անվասալյակների ճիշտ օգտագործում թեմայով գործնական վարժանքին մասնակցելուց հետո:

Ծրագրի նպատակն էր՝ նպաստել Հայաստանի և Գերմանիայի դպրոցների միջև համագործակցության ստեղծմանը, աշակերտների և ուսուցիչների փորձի փոխանակմանը, միջմշակութային ու ներառական կրթության ձևավորմանը:

Ծրագիրն իրականացվում էր Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի (Հայաստան) և «Vorstand Acht e.V.» ՀԿ-ի (Գերմանիա) կողմից՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության աջակցությամբ:

ԱՐՇԱՎ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կազմակերպած՝ այս տարվա վերջին ճանաչողական արշավը:
ԵՆԿ արշավականները իրենց ճանաչողական այցը սկսեցին Լաստիվերից,որին հաջորդեց գեղեցկուհի Հաղարծինը:Օրը լի էր արկածներով, էկստրիմով և հիշողություններ դարձած հրաշալի պահերով

«ԴԱՐՁԻ՛Ր ՍՈՒՊԵՐ ՄԵՆԹՈՐ»

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն (Հայաստան) «Foreningen Framtidstaget» (Շվեդիա) հետ համատեղ հոկտեմբերի 14-ից 21-ը Եվրամիության «էրազմուս+» ծրագրի շրջանակներում հյուրընկալում է «Դարձի՛ր Սուպեր ՄԵՆԹՈՐ» միջազգային դասընթացը: Դասընթացը նպատակաուղղված է աջակցելու Եվրոպական Համերաշխության Կորպուս (ԵՀԿ) ծրագրերում ներգրավված 27 մենթորների գիտելիքների բարելավմանը՝ նպաստելով ԵՀԿ համակարգողների և մենթորների ներուժի զարգացմանը և ԵՀԿ ծրագրերի որակի բարձրացմանը, ինչպես նաև «զինելու» մենթորներին ԵՀԿ կամավորներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներով, որոնք կօգնեն վերջիններիս լինել ավելի աշխատունակ: Ծրագրին մասնակցում են ներկայացուցիչներ Հայաստանից, Շվեդիայից, Հունաստանից, Խորվաթիայից, Ռումինիայից, Ռուսաստանի Դաշնությունից, Մոլդովայից, Բելառուսից, Իտալիայից, Վրաստանից և Ուկրաինայից:

GET A BIKE GET A LIFE

ԵՆԿ ՀԿ-ի «Get a bike, get a life» սոցիալական ձեռնարկատիրության ծրագրի շրջանակում հոկտեմբեր ամսվա ընթացքում շարունակել ենք ժամանցային ու ճանաչողական հեծանվային արշավները տարբեր ուղղություններով:
Այսպես, հոկտեմբերի 13-ին և 26-ին իրականացվեցին հեծանվարշավներ դեպի Մարմաշեն համայնք, այցելեցինք Մարմաշենի վանական համալիր, տեսանք Արգիշտի առաջինի արձանագրությունը և բացահայտեցինք Նադիայի լիճ գողտրիկ անկյունը:
Արշավները կազմակերպել և իրականացրել է ԵՆԿ ՀԿ հեծանվասարների ակումբի ակտիվ անդամ Ռաֆայել Խաչատրյանը:
Հոկտեմբեր ամսին տրվեց քաղաքային հեծանվարշավների մեկնարկը: Գյումրու ԵՆԿ ՀԿ հեծանվասերների ակումբի անդամները կազմակերպում և անցկացնում են քաղաքային հեծանվային տուռեր՝ կախված զբոսաշրջիկի հետաքրքրություններից:
Նշենք, որ ԵՆԿ ՀԿ հեծանվասերների ակումբի անդամները շարունակում են հեծանվավարության ուսուցման դասընթացները յուրաքանչյուր շաբաթ օր, որին կարող են միանալ բոլորը: Եթե դեռ կան մարդիկ, որ չգիտեն հեծանվել, հենց այդ պահն է լրացնելու բացը: Հաջորդ միջոցառումներից տեղյակ լինելու համար հետևիր ծրագրի էջին և միացիր արշավներին:

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ և ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Հոկտեմբերի 19-ին «Երիտասարդների ձեռներեցության ուսուցում հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» ծրագրի շրջանակներում հանդիպում տեղի ունեցավ տվյալ ծրագրի երիտասարդական աշխատողների հետ, որի ընթացքում ԵՆԿ ՀԿ նախագահ Արթուր Նաջարյանը և ԵՆԿ ՀԿ ծրագրի համակարգող Օվսաննա Պապիկյանը շնորհակալություն հայտնեցին երիտասարդական աշխատողներին՝ նրանց կատարած աշխատանքի համար:

Իսկ հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ հանդիպում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի շարժունակության ծրագրերի համակարգող Վալյա Մարտիրոսյանի ու «Երիտասարդների ձեռներեցության ուսուցում հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» ծրագրի շրջանակներում երիտասարդական աշխատողներ Արման Գևորգյանի և Արմինե Բաղդասարյանի միջև:
Նրանք Շիրակի մարզի 5 համայնքներում աշխատարաններ էին իրականացրել, իսկ հիմա որպես թիմի առաջնորդ մեկնելու են Վրաստանի Թելավի քաղաք՝ մասնակցելու միջազգային երիտասարդական փոխանակման ծրագրի:
Հանդիպման ընթացքում Վալյա Մարտիրոսյանը ներկայացրեց թիմի առաջնորդի դերն ու պարտականությունները:

Ծրագրի շրջանակներում Գյումրի, Սարապատ, Ցողամարգ, Անուշավան, համայնքներում հունիս-օգոստոս ամիսներին անցկացվեցին աշխատարաններ զբոսաշրջության և հյուրընկալության թեմաներով:
Աշխատարանների ընթացքում համայնքային խմբերից ընտրվեցին լավագույն մասնակցություն ցուցաբերած 8 երիտասարդ՝ Վրաստանի Թելավի քաղաքում երիտասարդական փոխանակման ծրագրին մասնակցելու համար:
Հոկտեմբերի 23-ին մասնակիցները հանդիպում ունեցան ԵՆԿ շարժունակության ծրագրերի համակարգող Վալյա Մարտիրոսյանի ու «Երիտասարդների ձեռներեցության ուսուցում հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» Հայաստանում ծրագրի համակարգող Օվսաննա Պապիկյանի հետ, որի ընթացքում քննարկեցին երիտասարդական փոխանակման ծրագրին մասնակցության կարևորությունը և ուղղեցին իրենց հուզող հարցերը:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Հոկտեմբեր ամսվա ընթացքում տեղի են ունեցել շարժունակության երկու ծրագիր:

Դրանցից առաջինը հոկտեմբերի 7-ին մեկնարկած «European Values Through Wide-Angle Lens» խորագիրը կրող էրազմուս+ միջազգային դասընթացն էր լուսանկարչության թեմայով Իտալիայի Սանտադեր քաղաքում:

Հոկտեմբերի 3-ից 17-ը Ֆինլանդիայում տեղի ունեցավ փորձի փոխանակման «New Beginnings» խորագրով աշխատանքային այց, որին մասնակցում էին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի համակարգող Գայանե Առաքելյանը և կենտրոնի երիտասարդական աշխատող Անժելա Ճանոյանը:

Ինչպես նաև այս ամսվա ընթացքում ունեցել ենք մեկ ծրագրի հնարավորություն էրազմուս+ ծրագրի շրջանակներում՝ միջազգային դասընթաց թվային երիտասարդական աշխատանքի թեմայով, Իսպանայի Լորկա քաղաքում:

ԻՏԱԼԵՐԵՆԻ ՈՒ ԳԵՐՄԱՆԵՐԵՆԻ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կոնտրոն» ՀԿ-ում մեկնարկեցին իտալերենի ու գերմաներենի սկսնակների ակումբները:
Առաջին հանդիպման ընթացքում մասնակիցներն հնարավորություն ունեցան ծանոթացման խաղերի օգնությամբ ճանաչել միմյանց ու ակումբավարներին, ինչպես նաև ներկայացվեց ակումբների վարման կարգը և ձևաչափը:
Ակումբների մասնակիցներին մաղթում ենք արդյունավետ ու հետաքրքիր աշխատանք:
☺

Ինչպես նաև էլենա Քադեն «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի շրջանակներում իր կամավորական աշխատանքն է իրականացնում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոնում»:
Նա Հայաստան է ժամանել Գերմանիայից մեկ տարի ժամանակով և իր ծրագրի շրջանակներում Շիրակի պետական համալսարանի թիվ 3-րդ ավագ դպրոցում գերմաներեն է դասավանդում հայ աշակերտներին:

ՀՈՒՇԱԳՐԵՐ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Հոկտեմբերի 16-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի միջև ստորագրվեց փոխըմբռման հուշագիր երիտասարդության ոլորտում համագործակցության վերաբերյալ: Փաստաթուղթը ստորագրել են ԵՆԿ ՀԿ-ի նախագահ Արթուր Նաջարյանը և Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Վահագն Ղուկասյանը:

Իսկ Հոկտեմբերի 17-ին Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի և Հայաստանում «Եվրոպական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր երիտասարդության ոլորտում համագործակցության վերաբերյալ:
Փաստաթուղթը ստորագրել են ԵՆԿ ՀԿ-ի նախագահ Արթուր Դաջարյանը և Հայաստանում «Եվրոպական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղի տնօրեն Հասմիկ Եղիազարյանը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԸ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆԸ»

«Երիտասարդների տան» առօրյան մշտապես հագեցած է կազմակերպվող թեմատիկ շաբաթներով, որոնք ներառում են կրթական բնույթ կրող աշխատարաններ ու հանդիպումներ հայտնի անձանց հետ:
Կենտրոնի պատանիների համար մեծ ոգևորություն էր հայտնի **դերասան** Արսեն Միքայելյանի հետ հանդիպումը, ով, լինելով մասնագիտական շաբաթվա հյուրը, պատանիների հետ կիսվեց իր գիտելիքներով և սիրով պաստասխանեց պատանիների հարցերին:
«Մարդու իրավունքներ» շաբաթվա ընթացքում կենտրոնի սաները մասնակցեցին թեմայի վերաբերյալ աշխատարանի, ստուգեցին գիտելիքները վիկտորինայի միջոցով, ապա միասին պատրաստեցին թեմատիկ պաստառ:
Շարունակվում են արվեստի և անգլերենի ակումբները: Այս ամիս ընթերցասեր պատանիների համար մեկնարկեց «Գրքասերների ակումբը»:
«Համայնքը ես եմ» ծրագրի մասնակիցները «Իրազեկող էջանշաններ» դասընթացի միջոցով կենտրոնի երիտասարդներին ծանոթացրին ՏԻՄ-ի գործունեությանը:
COAF Smart կենտրոնի կողմից «Երիտասարդների տանը» կազմակերպվեց առաջնորդության և հաղորդակցման հմտություններ թեմայով դասընթաց՝ Սառնաղբյուր, Գուսանագյուղ, Հոռոմ, Բենիամին համայնքների 8-ից- 12-րդ դասարանցի 20 մասնակիցների համար:
Կենտրոնի առօրյան ավելի հագեցած և հետաքրքիր դարձավ մեր սիրելի նվիրատուների կողմից նվիրաբերված նոր գրքերով, տարբեր ժամանցային և զարգացնող խաղերով:
Հոկտեմբերի 3-ից 17-ը Ֆինլանդիայում տեղի ունեցավ փորձի փոխանակման «New Beginnings» խորագրով աշխատանքային այց, որին մասնակցում էին «Երիտասարդների տան» համակարգող Գայանե Առաքելյանը և կենտրոնի երիտասարդական աշխատող Անժելա Ջանոյանը:
Հոկտեմբերի 30-ին «Երիտասարդների տան» սաների նախաձեռնությամբ կենտրոնում նշվեց Հելոուինի տոնը:
«Երիտասարդների տանը»՝ որպես ապագա երիտասարդական աշխատողներ իրենց փորձաշրջանն են անցկացնում փորձնակներ Արտաշես Հարությունյանը, Նարինե Խաչատրյանը և Մարիետա Եղիզարյանը: Իսկ կենտրոնի ադմինիստրատիվ աշխատանքներով կզբաղվի մեր նոր կամավոր Արմինե Մարգարյանը:



ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՐՇԱՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆ» ՀԱՄԱՐ

Ուրախ ենք տեղեկացնել, որ մենք արդեն ունենք ավելի քան 1000 եվրոյի նվիրատվություն:
Մենք շարունակում ենք քրաուդֆանդինգի արշավը «Երիտասարդների տան» համար, որպեսզի ավելի մեծ թվով երիտասարդներ հնարավորություն ունենան հասնելու իրենց երազանքներին: Այդ ամենի համար անհրաժեշտ է լրացուցիչ 16 820 եվրո:
Եթե ցանկանում եք նվիրաբերել, անցնեք հղումով, ինչպես նաև օգնեք մեզ տարածել այն ձեր ընկերների շրջանում:

Ցանկության դեպքում կարող եք նվիրաբերել նաև առձեռն կամ բանկային փոխանցմամբ՝ կապ հաստատելով՝
M: liana.hakobyan@yic.am
T: +37499426689